

ՎԻԿՏՈՐԻԱ ԱՂԱՆՈՒՐ

Վիկտորիա Աղանուրին (1855 մայիս—1910 մայիս) հայ ընթերցողը ծանոթ է հատկապես վենետիկյան բեղուն գործիչ Ա. Ղազիկյանի ջանքերի շնորհիվ, որը ժամանակին մեծ հարգանք է տաժեղ հայրենակցուհու պայծառ տաղանդի նկատմամբ, ոգևորվել նրանով, ոգևորել նրան և երկու հատորով թարգմանել նրա բանաստեղծությունները («Հավիտենական զրույց», 1905 թ., «Նոր երգեր», 1910 թ.):

Այդ հատորների մեջ զետեղված են ոչ միայն բանաստեղծուհու ստեղծագործությունները, այլև նրա մասին ժամանակի գրականագետների կարծիքները և զանազան կարևոր տեղեկություններ:

Վիկտորիա Աղանուրը սերել է Հին Ջուղայից Նոր Ջուղա, ապա Ննդկաստան, Փարիզ և, ի վերջո, Իտալիա տեղափոխված մեծահարուստ գրասեր հայազգի Աղանուրյան տոհմից: Հայազգի բանն այստեղ անհրաժեշտ է աճն պատճառով, որ նրան երբեմն վերագրել են պարսկական, հնդկական կամ եման մի ուրիշ ծագում: Մայրը իտալուհի էր. իտալացի էր նաև նրա ամուսինը: Չնայած այսօր վիճելի չէ նրա հայկական ծագումը, սակայն տեղին կլիներ հիշել, որ նա իրենց գերդաստանի տոհմածառը՝ կազմված իր նախնիների կողմից, ժամանակին հանձնել է Ա. Ղազիկյանին՝ ի պահ:

Եվ այսպես, Վիկտորիա Աղանուրի կյանքն սկսվում ու ավարտվում է Իտալիայում՝ անջրնջելի կնիք դնելով նրա ստեղծագործությունների վրա: Անհրաժեշտ էր հիշել, որ Աղանուրյանների տոհմում եղել են նաև ուրիշ բանաստեղծներ:

«Բազմավեպ» ամսագրում Վիկտորիա Աղանուրի մասին տպագրված է հետևյալ ուշագրավ միտքը. «Գաղան, երիտասարդության, կյանքի և սիրո մեծագույն բանաստեղծուհին՝ ձուլումի ամենևին հաջող պոետը» եղավ, որը միացրինց հայկական քնարերգակ հոգին իտալական քնարը քաղցրության հետ» (1948, ապրիլ):



Ժամանակին, բնականաբար, Ղևոնդ Ալիշանի ամենատես հայացքից չի վրիպել նաև մեր բանաստեղծուհին: Հայ-իտալական հարաբերությունների նվիրված իր «Հայ-Վենետ» աշխատության մեջ նա Վիկտորիա Աղանուրին համարում է «կենդանի Հայ-Վենետ» և գնահատում որպես «բանաստեղծ ոչ միայն նորագագաց, այլև խորագագաց»:

«Իտալական արդի բանաստեղծուհիներուն միջև,— գրել է Ջ. Մարրատին,— առաջնության պատիվը ալ Վիկտորիա Աղանուրի կպատկանի...

Անևիի Վիվանդի՝ աշխույժ հանճարեղություն մ՝ ունի, բայց ձևովը՝ շատ խեղճ. և Ասու Նեկրի՝ որ քնարերգական թափ ունի՝ չունի բավական արվեստ զայն սանձելու... Աղանուրի քնարերգականներուն մեջ ուրիշ քնադրոշմ մ՝ ալ կա հիանալի սիրուն... կրթող և ազնիվ, որ կարծես ներքին բույրն է Վիկտորիայի բանաստեղծության, և իբրև կնիքը՝ իր քնրթողի անձինն»:

«Վիկտորիա Աղանուր բանաստեղծական հոգի է,— գրել է մի ուրիշը,— խանը միշտ վառ, երևակայությունն աշխույժ, լայն ինքնաբերություն, դատողության շոռնություն, մտածումը վեհ զմայլման մեջ խոշորագույն հոլարև, սեփական պատկերներն է սահուն ու քնքշող բացատրություն»:

Այդ է ալլ արծանիքների պատճառով էր, որ Վիկտորիա Աղանուրի բանաստեղծությունները դեռևս իր կենդանության ժամանակ թարգմանվել են ֆրանսերեն, անգլերեն, իսպաներեն, հայերեն և ալլ լեզուներով՝ հեղինակին բերելով միջազգային ճանաչում:

Յավթը, նա կյանքից չեռացավ ուժերի ծաղկման շրջանում: Ամուսինը, որը իտալական բարձրաստիճան գործիչ էր, չդիմանալով ծանր վշտին, ինքնասպան եղավ թաղման արարողությունների ժամանակ: «Մեռնողը,— գրեց Ադա Նեգրին,— մեր բանաստեղծություններն առնեն ազնիվը և առնեն մարդուն էր: Կիտսին իր մասին իր քերթվածները. կիտսի իր մասին և վեց-հարվածյանը՝ որով ինքզինքն սպանեց իր կողակիցը, միևնույն մնալն չափազանց վախճալով»:

Վիկտորիա Աղանուրի պատմականությունը համընկավ իտալիայի պատմության համար խոշոր նշանակություն ունեցող այն իրադարձությունների հետ, որոնք միացրին երկրի տարրեր մասերը մի պետության կազմում: Դա խորագրեա ազդեց երկրի տնտեսական ու բաղադրական ողջ ընթացքի, ինչպես և գրական կյանքի վրա: Եվ եթե մինչև 1870 թվականն իտալիայում պաշար էր մղվում միավորման համար և շեշտը դրված էր հայրենասիրության ու ոռոմանտիկայի վրա, ապա այդ թվականից հետո, աստ՝ ճանաչաբար, ռազմարկայան առարկա դարձան երկրի ներքին կյանքը և սոցիալական հարցերը: Գրական նոր ուղիներում իշխող դեր վիճակվեց տեղական համարվող այն հոսանքին, որը յայտնի է վերիված անոնումով: Վիկտորիա Աղանուրը չէր կարող դուրս մնալ այս ընդհանուր ընթացքից: Ուստի նրա պոեզիայում, իշխող տեղ գրավեց սոցիալական անհավասարության և անարդարության դեմ մղվող պայքարը: Նրա համար դա մի զգալի պարտականություն էր ոչ միայն այն պատճառով, որ դիմացը կանգնած էր տիրող իրավակարգը, այլև այն պատճառով, որ ինքն էլ բարձր դասի միջավայրից էր: Այդ ամենօրյա մթնոլորտը, երես առ երես հանդիպումները, բնականաբար, պիտի արվել ծանր վիճակի մեջ դնեին նրազգաց բանաստեղծություն: Ընդհատ է նկատված ժամանակակից քննադատների կողմից, թե նա սպասեց է զգուշ, արթուն կենար մեծաշուք սրահներու հանդեպ, որոնք զինքը փառքերու բարձունքը պիտի հա-

նեին, եթե հավանք անոց հանդեսները պըն-նազարդել, ըլլալ՝ ինքնա անոց հուշատեղի-րուն և հովհաննիսյան հանելի Մուսան: Բայց նա այդպես չվարվեց. «Վովեցավ նե և հաղթեց: Պահեց ամբողջ անքիժ իր անկախությունը»:

Վիկտորիա Աղանուրի քնարը մեկնաբանվել է հիմնականում իտալական իրականության հենքի վրա, սակայն կենսագրական պարագաները օգնում են ընդլայնել սահմանները:

Ա. Ղազիկյանի «Հասարակած (Հավիտենական զրույց)» հատորի առաջաբանում կա մի վկայություն, որը ցարդ քննության առարկա չի դարձել: Այդտեղ տողատակային մի ծանոթագրություն մեջ կարդում ենք. «Այս տողերն արդեն գրված ու շարված իսկ էին, երբ «Giornale d' Italia» թերթին տարվույս ապրիլի 10 թիվն ստացա բանաստեղծուհին, ուր իր մեկ նամակը կար, որ տեղեկություններ կու տա իր մասին: Ապրիլի 9-ին՝ այդ և կին՝ Փլորենտիա կատինին (հայերը օրը Leonardo da Vinci-ի ակումբին մեջ իր ամուսինը՝ Կոստո Բոմբիլի՝ բանաստեղծություն մը պիտի կատարեր Մաքսիմ Կորբի (նասին): Շոն ըստ փառաբանաց ա-կումբին՝ ուր գտնարված էր Փլորենտիո մտա-վորական և արվեստագետ բարձր դասակարգը, Վիկտորիայի բանաստեղծություններն ինչ-ինչ կատրենի կկարդացվին, ծափերու և կեցցեներու որոտընդոտ շառաչներուն միջև ի ներկայության Վիկտորիայի և ամուսնուն»:

Այսպես, ուրեմն, 1905 թվականի ապրիլի 10-ին Փլորենտիայի բարձրաստիճան մտավորականության համար Վիկտորիա Աղանուրն ու իր ամուսինը հատուկ հավաք են կազմակերպել՝ նվիրված Մաքսիմ Գորկուն, որտեղ բանաստեղծության հանդես է եկել Վիկտորիա Աղանուրի ամուսինը՝ Կոստո Բոմբիլին, իսկ դերասաններն արտասանել են Վիկտորիա Աղանուրի բանաստեղծություններից ընտրված նմուշներ: Հասարակությունը բուռն ծափահարություններով է դիմավորել բանաստեղծուհուն:

Առաջին հարցը, որ առաջանում է այս կապակցությամբ, հետևյալն է. ի՞նչ հավաք էր դա, որ կազմակերպել էին բանաստեղծուհին և իր ամուսինը՝ նվիրված Մաքսիմ Գորկուն:

Փաստերը ցույց են տալիս, որ Մաքսիմ Գորկին այդ ժամանակ, ապրիլին 1905 թվականի ապրիլին ոչ միայն չէր կարող լինել Իտալիայում, այլև ազատ չէր իր իսկ հայրենիքում: Նա այդ թվականի հոկտեմբերյան դեպքերի կապակցությամբ ձերբակալված էր և գտնվում էր բանտում: Վ. Ի. Լենինը իր հոդվածներից մեկում, թվարկելով 1905 թվականի հունվարյան «Դեկատոսացիայի ձերբակալված անդամների» անունները, հիշում է նաև Մաքսիմ Գորկու անունը՝ ավելացնելով. «Արտասահմանում, բուր-

ՀԱՂՈՐԴՈՒԾՆԵՐ

ժուական կրթված հասարակության մեջ եռանդուն կամպարեիս է սկսվել Գորկու օգտին և նրան ազատելու համար ցարի առաջ արվող միջնորդությունը ստորագրել են շատ գերմանական ակադեմիկոս գիտնականներ ու գրողներ։ Այժմ նրանց միացել են Ավստրիայի, Ֆրանսիայի և Իտալիայի գիտնականներն ու գրականագետները» (Երկեր, հատ. 8, էջ 153)։

Պետք է նշել, որ Իտալիայում Մաքսիմ Գորկուն ճանաչում էին վաղուց։ Դեռևս 1901 թվականին իտալերեն հրատարակվել էին նրա մի քանի գործերը և արժանացել շքանշանի և պատվոգրի։ Շուտով այդ հետաքրքրությունն ավելի է մեծանում։ Միայն 1902—1906 թվականներին Մաքսիմ Գորկու երկերից կատարվում է 23 հրատարակություն՝ առանձին գրքերով։ 1905 թվականին իտալական մտավորականության որոշ ներկայացուցիչներ ստորագրում են Գորկուն բերանից ազատելու բողոքները (տե՛ս «Горький и зарубежная литература, М., 1961, էջ 242—246»)։

Այսպիսով, բացահայտվում է մի կարևոր իրողություն, որն իր պատմական նշանակությունից բացի ունի նաև մի այլ խորհուրդ։ Եթե Ֆլորենցիայի ժողովը նվիրված էր Մաքսիմ Գորկու ազատման նպատակին, ապա, անկախ ամեն ինչից, այնտեղ պիտի պատշաճ վերաբերմունքի արժանացած լինեին նաև Գորկու պաշտպանած հայացքները, մանավանդ որ նրա որոշ գրքերն արդեն թարգմանված և տպված էին Իտալիայում։ Այս կապակցությամբ արժե հիշել իտալացի տաղանդավոր գրող Մասսիմո Բոնտեմպեչիի մտքերը 1900-ական թվականներին և իր ուսանողական միջավայրի տրամադրությունների մասին։ Ըստ նրա՝ բուրժուական ժազում ունեցող երիտասարդությունը, որն ամառում և առում էր իր՝ այդ զասակարգին պատկանելը, անհամբեր սպասում էր նրա կոծմանը։

Չմոռանալով, որ խոսքը վերաբերում է այն տարիներին, երբ ծագում էր Վիկտորիա Ադանուրի քնարը։ Ուստի, միանգամայն իրավացիորեն այդտեղ պիտի որոնել զաղափարներ ու տրամադրություններ, որոնք բնորոշումը գծերով հարազատ են եղել նաև Մաքսիմ Գորկու փայլած հայացքներին։ Եվ եթե Ֆլորենցիայի ժողովում արտասանվելու համար Վիկտորիա Ադանուրի բանաստեղծություններից բնորոշվել են «ինչ-ինչ կոտորներ», ապա դրանք պիտի համապատասխանեին նախաձեռնված միջոցառումի ոգուն և Մաքսիմ Գորկու արդարացմանը։

Ա. Դադիկյանի վերոհիշյալ ծանոթությունը նշանակալից է նաև մի այլ առումով։ Ա. Դադիկյանից իմանում ենք, որ Ֆլորենցիայի ժողովում պահանջ էր առաջացել լսելու Վիկտորիա

ի Վադանուրին։ Եվ նա «նամակի» օգնությամբ (այսինքն՝ գրավոր) առել է. «Երևանյի խոսի մանկության վրա, որ ծաղկեցավ գրեթե արվելյան երազի մը մեջ, ունեցողիցով ժամեր ու ժամեր, լուրի մեջիկ, ուշադիր խոշոր աչքերով, հայրենաբաղձական երկայն նկարագրությունները հորս, որ եկած էր Ասիայեն... կպատմեր եռանդամբ, ու երթալով կրորորներ, կվառներ իր հրաշալի տեսիլքին մեջ։

Ամեն ինչ հոս մուր օւ ենդ կրվի ինձի, կկրկներ հաճախ։ Ու մնաց ինձի հայրենական արյունին հետ՝ թելագրանքը այն մորթու պատմություններուն, բացի (իմա՝ բաց տարածություն, ազատության— Ա. Մ.) ծաղավ մը, արևու մուլություն մը, զարշարք մը բոլոր մեզեն, առավերական դեմ, գարհուրանք մը բոլոր սահմաններուն դեմ...»։

Մաքսիմ Գորկուն նվիրված հանդեսի ժամանակ ասված այդ մտքերը, հիրավի, հոգեհարազատ և Մաքսիմ Գորկու ազատասիրական ըմբոստ երգերի ու գործերի ոգուն։ Դրանք միաժամանակ մատնում են բանաստեղծուհու լիցքավորման հայկական ակունքները։ Նրա էության մեջ ներծծված են եղել հատկապես իր ժողովրդի դառն հալածանքների պատմություններից առաջացած մրկող տրամադրությունները։ Եվ եթե նա խոսում է մի կողմից՝ արևի ու ազատության խելագար սիրտ, իսկ մյուս կողմից՝ խավարի ու մեղքի բուռն ատելության մասին, ապա դա յուրովի վկայում է հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված նքա ապրումների մասին, որոնք միաժամկետ են իտալական ժողովրդի առօրյայով արգասավորված կրակոտ երգերում։ Հենց այս երկու հատկանիշը՝ թե՛ ազատ ու միավորված Իտալիայի սոցիալական անարդարությունների քննադատությունը և թե՛ օտարի լծի տակ չեժող հայ ժողովրդի ազատագրական ձգտումների երազանքը բավական կլինեին, որ Վիկտորիա Ադանուրը բարձրանար իր ժամանակի համամարդկային ազատության և եղբայրության վսեմ գաղափարին։ Եվ հենց դա է, որ իշխում է նրա քնարերգության մեջ։ Ռեալիզմի և ռոմանտիզմի այդ խնդիրայ խառնարանում մարմնավորված երգերի մեջ հաճախ չի էլ նկատվում, թե բանաստեղծուհին ո՞ր շարիքի դեմ է ուղղում իր սլաքը՝ սոցիալական, թե՛ օտարի բռնության։ Պահանջը մեկ է՝ ազատություն։ Այս պոռոտով մի առանձին իմաստ ունի Վիկտորիա Ադանուրը «Սեչլայի հովիտը» բանաստեղծությունը, որտեղ ճնշվածների վիճակը նմանեցված է արծվի ճանկերում ճչացող հավի վիճակին, իսկ հեղինակի ցանկությունը դրսևորված է այն հույսով, թե գուցե մի օր այդ ազնկատուր Հիշը հասնի նաև երկինք։

Աղբերուն մեջ, կանչե, դուն, դուն իմ
անունըս կարդա.
եվ ես՝ քրատ սիրտը բաճ՝ պիտի
բռնիմ փութապես
ու քեզ պիտի փրկիմ ես:

Այս և նման ուրիշ բանաստեղծությունների
ամար է, որ Վիկտորիա Աղանուրը դիտվել է
որպես խիզախ բաղաբացի, քերուշ, բայց և
առնական պոեզիայի անդուգական ներկայա-
ցուցիչ:

Մեծ է նասարակական տրամագրությունների
շառավիղը Վիկտորիա Աղանուրի բանաստեղ-
ծություններում: Մի այլ երգի մեջ նա, դիմելով
աստծուն, ասում է.


Նախնիր, Տեր, դադրեցուր...
Սովալլուիկ անգրդներն,
ու արծիվներն արդեն շատ
Իսկ լափեցին գեշագեշ
Կարմիր սքրտեր դյուցազանց...
ու հասկրցուր ամենուն
Թ՝ երկիրս ծառավ է սիրո:

Այս սողերը միանգամայն թարմ են և այսօր:
Վիկտորիա Աղանուրին ծանոթ են եղել նաև
խիզախ ուժերը, նրանց դեմ կանգնած՝ դժվա-
րությունները: Այս տեսակետից հետաքրքրական
է «Փառք» կոչված փոքրիկ բանաստեղծու-
թյունը.

Կրանիզ լեռ մըն է դրժնե, անավուր...
Ումանք կելլեն վեր, բայց դարվերն այն՝
անոնց
Նվազկոտ եռանդը կը մարե, ու լեռան
Կիսուն կսունե մտածկոտ զրնդն շատրկանց:
Ուրիշը կանց շառնե, բողով պատաններ:
Զգեստի, մըսի ժայռերն վրա սայրասուր,
Կելլե, կհասնի և դռն՝ մը կը տընկե:

Բանաստեղծուին փառավոր ուղիների գովեր-
գու և լուսավոր նպատակների մարտիկ է նաև
«Վարձապետին երգը» և «Քերթողին երգը»
ստեղծագործություններում: Չնայած դրանք ա-
ռանձին գործերի տպավորություն են թողնում,
սակայն հղացված են միասին, որպես մի ամ-
բողջություն անբաժանելի մասեր: Առաջինում
պատկերված է պալատադարանի բարոյախոս-
անակավարժը, որն իր սանին ցույց է տալիս
շափավոր և զգուշավոր կյանքի ապահով ուղին:
Երկրորդում, հակադրվելով նրան, բարոյախո-
սում է ինքը՝ բանաստեղծուհին.

Վառնե և մրրիկ կը սիրե Քերթողն...
եվ քսովերի մ՝ եսենե երբեք բռնի՝
Կամ երազի, հետիք՝ ձայնի սիրաբու,



Մի էջ Վ. Աղանուրի ձեռագրից

Հովիտ մը կա երանիկ...

Փափիկ դրախտ մ՝ է, ուր Աստված հանեցավ
Սրբոն շուրհե, շուրհե ու զվարթ, քափառոտ
Թիթեռնիկներ, ու պիտի դուն բսի
Թե կը տիե խաղաղությունն հոն հավերժ...
Թայց ամայի համբուն մեղեն, խորհեն մար...
Կը հասնին բեզի
Հագնած ճիշերն հետին բրայնիկն,
Ջուր ենեզավորն արծիվ սեղմած է կուրծքին
Իրծախարհուր, և ամեն մեկ անձալի
Կու գա կերթա դառն և երկայն արձագանք մը.
Ու օր մ՝ ալ գուցե երկինք կը հասնի...

Ինչպես յուրաքանչյուր խոշոր բանաստեղծ և,
առհասարակ, գաղափարական նվիրյալ պատ-
րաստ է իր կյանքի զնով պաշտպան կանգնելու
խավարի ճիւղանն ընկած վտանգավտներին, այն-
պես էլ՝ Վիկտորիա Աղանուրը: Կարծես հեքիա-
թային ամենակարող ու ամենաբարի կախարհն
է խոսում.

Ու թե խավարը երբեք հակատագրին
համբուն վրա
Քեզ պարուրե ու քաշե վար՝
անդունդին գալացու,

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Խոստամուծին գրեթե ապաստանում է մոլուցիկ
արհամարհել,
Լաիկեզ բացերը, վիշապի ժանտ հանկերև,
Բարդուխյանն անգամ ձեռ. ո՛վ մանկավարժ:

Անդրազական է րախաստեղծու՜մ աղատասխ-
րությունը վ՛ալայդ ոչմասած կոլիբրիի մը՝
գողարիկ բանաստեղծո՞ւթյունը: Կոլիբրին փոք-
րիկ վալլի մեղուի մեծության գեղալիետուր
թռչուն է: Հեղինակն ա՛յա ալդ սպանված թռչ-
նիկի նետ է Վամնասառմ իրեն և նրա վիճակը
գեղարդատմ իրևնից: Ինչո՞ւ, որով նետն ալդ
թռնիկը սպանվելուց առաջ հեղև է օդում և
բարձունքից տեսել լեռնոցից ու ծովերից այն
կողմ ընկած հրազ՛ւի տարածությունները.

Ըսե ինձ, փռֆր ըսպանված.
Այն Լրջանիկ աստեկին...
Ի՛նչ տեսար, օ՛հ, բսե ինձ,
Լեոնեհե անդի՛ն ու անդի՛ն,
Մոպեհե անդի՛ն ու անդի՛ն...

Հանուն ազատության և արդարության մղվող
այդ պայքարը Վիկտորիա Աղանուրի համար նոր
երևույթ չէր. նա ըաղաթանոթ էր անցյալի պատ-
մությանը, և նրան այսպես էր պատկերվում իր
հոգեհարազատ նախորդների երթը.

Կանգնեմ... զինյալն Ախի կռողա Հոմերի.
Միֆեյանենքը կը ժրլտի Տանդի...
Եվ այն հագար դեմբերուն վրա կը ծրփա
Լայնածալալ միակ գրռակ մը հռվեն:
Ապուշներեն ծաղրոված մեծ խոսքը՝ վեն
Կը ճանաչեն ասովածային գրռին վրա.
Ատ՛րի խեղալ: Կի որ Բու ձայնը լրսեն՝
Հուր կը հոսա շրինաղագույն փաղցրութեան...

Ան ան շեղմանակի որոշակի եզրակացություն.
կան ու կլինեն սերունդներ, որոնց դորդին զոր-
ված է՝ «Սուրբ իտեալ», սակայն որի նամար
պայթաբողները իզուր պիտի նահագատվուն
վնասեն՝ անպշտենից արհամարված:

Անշատաբա՛կ, նկատե՛լի է, որ Վիկտորյա Արանյուքի երգերում իշխում է խոհականության տարրը: Նա խորապես մտածող, բազմակողմա՛ն իրերեն զարգացած բանաստեղծուհի էր: Իր այդ գլխիթխերների համար էր, որ նրան ընտրել էին Վենետիկի «Աթենական կաճառի» անդամ: Հա՛ճախ նրա իմացություններն ու զգացմունքները, հաղնիլով առօրյա իրականությունից, հեռանում են՝ երևակայական ինչ-որ վայրում և ժամա՛նեկներին զջու՛ր հանգիպելու: Հիշենք «Սոգգոյի ամբողջ (Տրաքիանեի վրա)» քերթվածը: Բա՛նաստեղծուհին այցելում է մի հին ու վաղու՛ր լքված դղյակ. ուժեղ տպավորություններից նրան

Իւրում է, իւ իրեն է գիտում դարձրի խորքից
 եկող մի սիրող ձայն. «Ձեռն չհըն...»: Ինքը
 դժգոհանում է չհեղ, սակայն ձայնը նրան
 կշտամբում է.

Ռայյ արալիզ մէջ պետք է որ դուն կենդանի
Պահած ըլլաս քնակաւաւնիդ հիշատակն,
Ու մայիսիդ եւ ինչ կըզոր մեծ սիրոյդ...

Լանատեղծուի՛ն աշխատե՛լ է Նանկեվում այդ
տրամադրությանը, որ նրան թվում է, թե գործ
ունի ճշմարտության չնոս:

Ի՛ր հերավկերն ինձի հասավ հավակնե,
Սիրույս հրավերը, նըշմարիտ իմ սիրույս,
Մտալույտ, փաղցր կենդանի ստազոնթյունե՛,
Ու փայլք ուրիշ ամեն պատկեր ցրեղեցավ:
Հիս կարճեցի ավելի հպարտ ու ղշխա...
Ինչ՝ իրե՛ն շողով, լուսով պսակալազարդ
՛Ինչ՝ ի բարբառը սիրական, որ կու տար
Իմին անունըս...

Ստեղծելով դարերի խորքից եկող սիրո այս
 Լրեալայական, բայց շոշափելի պատրանքը,
 Վիկտորիա Աղանուրն ընթերցողի միտքը շեղում
 է դեպի այնքան խորիմաստ ու նպատակաալայ
 չետեղայ զուգահեռը.

Աշխերսս վեր Երկնից հրաշխն վերցույի-
նվ ըսի.— Ի՞վ գիտես, չամեն ինչ հրաշխ է,
երբեմն այնքան անեւուն անծայր են լուսին
Համարողութիւնն, որ ընկրդմած քիբերուն
Ժերես հիմա կհասնին որք ճըշտյունեն
Հազարամաս մեռած աստղի մ' հեռավոր:

Ուրեմն, գուցա նու մի կողմից՝ սեղ շահանդ վաղուց արդեն մեռած աստղի լույսի և մլուս կողմից՝ վաղուց մեռած սիրող երիտասարդի թվադուռով լսելի ձայնի միջև։ Այսպիսի պատկերի շանդիպում ենք նաև Եղիշե Զարենյիցի «Տաղ» ձոնված մեռյալներին քանաստեղծության մեջ.

Այդպես էլ շողն է արևի ու ցոլիը
մեռած ասպդերի.—
Հասնեմ է լույսը նրանց վեզ, բայց
վաղուց մոխրագած են նրանք...

Մանոթ էր Զարենցը Աղանուրի պտղագիտին։
Հավանաբար, այժ, որովհետև Վիկտորիա Աղա-
նուրի շունչն զգացվում է հասն նրա այլ քա-
նաստեղծություններում։

Վիճակագրի Լևոն Բաբայանի քանադական ժողովուրդներին:

րի առաջին հատորում հանդիպում ենք «Հայկական դատիկ» խորագրով մի գողտրիկ բանաստեղծության, որի մեջ չեղինակը, այն ժողովրդի ծանր վիճակը համեմատելով Քրիստոսի խաչվելու ժամանակը, նրան՝ վերածննդի մոտալուտ խոստումով:

Ո՛վ Հայաստան. ես կը տեսնեմ, քո ծոցի ալ կը պատռեն նոր փառիսկյիք: Կը մողվեն Տիգրի և ցիխն ու երեսիդ կը նետեն. Ի՛ր քու ծառավոց անցրենս՝ բույն կու տան բեզ: Թայք թե անհագ վայրագ խուժանը ժպտիս քու ձաղկրված անդամներուդ վրա հե՛ք Կը նստիս այսօր տանդանքը անաղ Գողգոթային, քո՛ւ ալ Ձատիկըդ մտա է:

«Քու ալ Ձատիկըդ մտա է» ասելով, բանաստեղծուհին նկատի ունի իր ժողովրդի ազատագրության, հաղթության, նոր ու ինքնիշխան կյանքով ապրելու գաղափարը: Քանի որ այդ բանաստեղծությունը տպագրվել է դեռևս 1900 թվականին, ապա պիտի ենթադրել, թե այն գրվել է 1890-ական թվականների կոտորածների ազդեցությամբ:

Այդ մասնականների ցնցող դեպքերը, հավանաբար հենց բանաստեղծուհու շնորհիվ, արժանացել են նաև իտալացի խոշոր գրող, զրադանադետ և Վիկտորիա Ադանտի ուսուցիչ ու բարեկամ Ջ. Կարդուչչի ուղադրությանը:

Կը նրննե բուրբ... Երեկ էայ գլխսներ Թաքափեցան կոր մանգաղին յուր հերեկ. Զառնե՛ պատառ-պատառ զապի գետնամած՝ Կընծայեք Եվրոպայի՝ աղջուհիներով գնդուհու...

Կը նրննե բուրբ... Եվ քիստանյա միապետներ կը հսկեն՝ Ապիտակ հերթիներն Փատիշանի հարմիսն:

Նկատելի է, որ բանաստեղծուհին, իր մեջ համատեղելով երկու ժողովրդի գաղափար լինելու մեծ պարտականությունը և ուղղակիորեն կապված լինելով իտալական գծին, ապրել ու մեռել է որպես իտալական քաղաքացի, չմոռանալով հրեք մյուս գիծը և իր որդիական պարտքը նրա նկատմամբ: Նա խոսել ու գրել է իտալերեն՝ չիմանալով անգամ հայերեն խոսել: Եվ երբ նրան հարց են տվել, թե ինչու չի սովորել այդ լեզուն, նա պատասխանի փոխարեն ար-

տասվել է, ինչևիդ, թե որքան հաճելի կլինեք դա իր յոր համար:

Վիկտորիա Ադանտի, որպես այն ժողովրդի տառապանքներով շնորհի կերպարն ավելի ամբողջական կդառնա, եթե հիշենք նրա մի նամակը (նոյեմբերի 15, 1904 թ.) Ա. Ղազիկյանին՝ գրված իր առաջին գիրքը հայերեն տպագրելու առիթով. «...ես հպարտ պիտի ըլլամ՝ ներկայացվելու և ճանաչվելու համար Ձեզմով Հայաստանի եղբայրներուս, այդ մեծ բզեզվածին, որուն համար իրավցեն պիտի ուզեի որ Մուսսու կառնար հնչեցնել երգ մը այնպես անեղորեն մեծաշուք, որ դանիներուն ձեռքը դադացներ:

Անձնական և երախտապարտ

Վիկտորիա Ադանտի Բոմբիլի:

Բանաստեղծուհին այնպես էլ չհասցրեց իր այդ խոստումն իրականացնել: Սակայն մահից առաջ նա չմոռացավ գրել «Հեռավոր եղբայրներուս» գերթվածը՝ Ադանայի կոտորածների բոթի ազդեցությամբ:

Լուսնակը ձեր տուներուն վրա կը ժրպտեք Երեկ, այսօր չի՝ փրկտուր, չի՝ նայիք, լուսն կանցնի, կերթա. գերեզմաններ ու ավեր՝ Ամեն տեղ. հարկ մը չմընաց կանգուն՝ ուր Լուսնակը ձեր տուներուն վրա կը ժրպտեք:

Ցնցող են մահամերձ ու վշտալար բանաստեղծուհու տողերը՝ ուղղված 1909 թվականի կիլիկյան ջարդերից փրկված այն որբերին. «Սիրո և խորին համակրանաց ողջունես կը զրկեմ այն որբերուն, բայց ի՞նչանք եմ... չեմ կրնար...» («Գեղունի», 1909, էջ 72): Նա մեռավ այն ծանր գիտակցությամբ, թե պարտք մնաց իր ժողովրդին: Մեզ համար, սակայն, ճշմարտությունն աչելի պարզորոշ է: Լուսնայի նշմարողության կարող էր ասել, որ այն ամենը, ինչ կամեցավ, բայց չկարողացավ գրել Վիկտորիա Ադանտիը՝ այն ժողովրդի ուղղակի հասցեով, նա գրել և մարմնավորել է իր այն բոլոր բանաստեղծությունների մեջ, որոնց առդերից փայլատակում է ռաքի ծարավ մը, արևի մոլություն մը, զարշանք մը բոլոր մեզից, ամպերուն գեմ, զարնուրանք մը բոլոր սահմաններուն դեմ: Այսօրվա նա հայ է իտալական գրականության մեջ:

ԱՍՍՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ